ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5278-Ա « 28 » հոկտեմբերի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.116 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ԹԱԳՈՒՀԻ ՊԱՐԹԵՎԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2026 թվականի հոկտեմբերի 13-ի N 898 արձանագրությունը՝

1. Թագուհի Պարթևի Հովհաննիսյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 2-ից նշանակել «Երևանի Սամվել Հովսեփյանի անվան հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2026 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2031 թվականի նոյեմբերի 2-ը ներառյալ:

2. «Երևանի Սամվել Հովսեփյանի անվան հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրեն Թագուհի Հովհաննիսյանին:

3. «Երևանի Սամվել Հովսեփյանի անվան հ.116 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արաքսիա Քեշիշյանին ազատել

նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

4. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 